Արձանագրություն N 4

Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-20/38 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

22.05.2020թ.
Ժամը՝ 12:30

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Աբրահամյան/գնահատող/, Ա. Սարգսյան / գնահատող/, Կ. Հարությունյան /բացող/, Ռ. Գրիգորյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/38» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

(Ա. Կիրակոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 21.05.2020 թվականին «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն իր 20.05.2020 թվականի թիվ 3651-20 գրության տեղեկացրել է, որ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/38» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ԷԼ-ՍԹՐՈՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման ապահովման բանկային երաշխիքը չի թողարկվել բանկի կողմից:

1.2 Հաշվի առնելով, որ մինչև պայմանագրի կնքելը պարզվել է, որ մասնակիցը ներկայացրել է բանկի կողմից չթողարկված բանկային երաշխիքներ՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետը՝ մասնակցի հետ պայմանագիր չկնքել:

1.3 Հաշվի առնելով, որ ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ---------- Ռ. Գրիգորյան

---------- Ա. Սարգսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ռ. Աբրահամյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան